

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Արմեն Բաբայանի, Արծվիկ Մինասյանի, Ադվան Վարդանյանի և Արմեն Ռուստամյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-145-09.11.2012-ՏՀ-010/0 և Պ-145¹-09.11.2012-ՏՀ-010/0) վերաբերյալ:

Օրենքների նախագծերի փաթեթով առաջարկվում է 2013 թվականի հունվարի 1-ից վերացնել նվազագույն շահութահարկի համակարգը: Այդ կապակցությամբ հայտնում ենք, որ նվազագույն եկամտային հարկի և շահութահարկի գումարների վերացման գաղափարն ընդունելի է, և այդ ուղղությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից արդեն իսկ իրականացվել են համապատասխան միջոցառումներ: Մասնավորապես՝

1) 2012 թվականի նոյեմբերի 12-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված՝ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով ուժը կորցրած է ճանաչվել «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածը, որով կարգավորված են նվազագույն եկամտային հարկի հաշվարկման և վճարման հետ կապված հարաբերությունները.

2) շահութահարկի նվազագույն գումարների վերացման վերաբերյալ համապատասխան դրույթները ներառվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի նոյեմբերի 22-ի նիստում հավանության արժանացած հարկային հարաբերություններ կարգավորող մի շարք օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող օրենքների նախագծերի փաթեթում, ինչն առաջիկայում՝ սահմանված կարգով կներկայացվի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվազագույն շահութահարկի համակարգի վերացումը հանգեցնելու է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների որոշակի կորստի, նշված փաթեթում ներառված «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվել է, որ նվազագույն շահութահարկի համակարգի վերացման վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնելու 2014 թվականի հունվարի 1-ից:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ժամանակավրեպ է համարում ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը:

Օրենքների նախագծերի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների
նախագծերի ընդունման դեպքում**

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի
ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին>> և <<Հարկերի մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում
կարգավորման**

1. <<Շահութահարկի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին>> և <<Հարկերի մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի
Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) ընդունման
արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և
կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական
հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծերի ընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա
բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը
կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին
չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում
կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության
համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը
բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա նախատեսվում է **դրական** ազդեցություն, քանի որ *Նախագծի ընդունման դեպքում կվերացվի շահութահարկի նվազագույն գումարի վճարման պարտավորության պահանջը:*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) հարկատուն ազատվում է նվազագույն շահութահարկի վճարումներից:

Նախագծերի մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է, որ Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում ապրանքային շուկաների հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն չի կարող:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՏԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի
վերաբերյալ**

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն
իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի
«Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման
ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ
հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Եզրակացություն

**«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների
նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության
գնահատման**

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն
կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի
(այսուհետ՝ Նախագծեր) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական
ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի
N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական
պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և
դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք
ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **չեզոք
ազդեցություն:**

Եզրակացություն

«Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Հարկերի մասին» Հայաստանի Հանապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծերով առաջարկվում է 2013 թվականի հունվարի 1-ից վերացնել նվազագույն շահութահարկի համակարգը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նվազագույն շահութահարկի գործող համակարգի հիմնական նպատակը հարկ վճարողների կողմից վնասների հայտարարագրումը զսպելը և պետական բյուջեի ընթացիկ հարկային եկամուտների ապահովումն է՝ գտնում ենք, որ նախագծերի ընդունման դեպքում պետական բյուջեի եկամուտները տարեկան կտրվածքով կկրճատվեն 5-7 մլրդ դրամով:

Պ-145-09.11.2012-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Շահութահարկի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի սեպտեմբերի 30-ի ՀՕ-155 օրենքի 47¹ -րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել :

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

Պ-145¹-09.11.2012-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի հավելված 1-ի 1-ին բաժնի 1.4 կետի «է» ենթակետից հանել «շահութահարկի կամ» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ օրենք) 6- րդ հոդվածով սահմանվել է, որ հարկվող շահույթը հարկատուի համախառն եկամտի եւ սույն օրենքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է, սակայն նույն օրենքի 47¹ -րդ հոդվածով սահմանվել է, որ օրենքի 47 հոդվածով սահմանված կարգով որոշված շահութահարկի կանխավճարի գումարը յուրաքանչյուր եռամսյակի ընթացքում օրենքի 47¹ -րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված մեծության 1 տոկոսից պակաս լինելու դեպքում հարկատուն պարտավոր է կատարել նվազագույն շահութահարկի եռամսյակային վճարումներ՝ այդ մեծության մեկ տոկոս դրույքաչափով: Օրենքի նույն հոդվածի 6-րդ կետով սահմանվել է, որ նվազագույն շահութահարկի տարեկան հանրագումարի եւ հաշվետու տարվա փաստացի շահութահարկի դրական տարբերությունը նվազեցվում է հետագա տարիների շահութահարկից: Այսինքն տարիների ընթացքում տնտեսվարող սուբյեկտի կողմից վճարված եւ կուտակված նվազագույն շահութահարկի գումարները նվազագույն շահութահարկի տարեկան հանրագումարի եւ հաշվետու տարվա փաստացի շահութահարկի հավասար լինելու կամ բացասական տարբերություն առաջանալու դեպքում չեն վերադարձվում կամ հարկատուի կողմից ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա այլ հարկատեսակների գումարներից չեն հաշվանցվում:

Փաստորեն վնասով կամ մինչեւ 5 տոկոս շահութաբերության մակարդակով աշխատող տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարման ենթակա փաստացի շահութահարկից ավել վճարված եւ իրեն պատկանող նվազագույն շահութահարկի գումարը կուտակվում եւ չի վերադարձվում հարկատուին նույնիսկ նրա լուծարման դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվել է, որ եթե երկրորդ եւ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա ընկերությունը պարտավոր է հայտարարել եւ սահմանված կարգով գրանցել իր կանոնադրական կապիտալի նվազումը: Եթե ընկերության նշված ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն կամ պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, ընկերությունը ենթակա է լուծարման(հոդված 98, 111):

Միաժամանակ ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 18-ի N 730-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության 2012-2017թ.թ. ծրագրի «Տնտեսական աճի քաղաքականությունը» բաժնում, որպես գործարար եւ ներդրումային միջավայրի բարելավում նշված է, որ «վերացվելու է շահութահարկի նվազագույն շեմի կիրառման պրակտիկան», հետեւաբար առաջարկվող օրենսդրական փոփոխությունները համահունչ են ՀՀ կառավարության կողմից վարվող տնտեսական քաղաքականությանը, մյուս կողմից վարչարարության բարելավման, կատարված եւ կատարվելիք մի շարք օրենսդրական եւ ենթաօրենսդրական փոփոխությունների (մասնավորապես 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հավելվածի 6-րդ բաժնի 2)-րդ կետը, վերջերս ՀՀ կառավարության հավանության արժանացած « Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը) արդյունքում զգալիորեն նվազել են եւ կնվազեն դրամական հաշվարկներով կատարվող գործարքների մասով հարկման հիմք հանդիսացող իրացման շրջանառությունների անհարկի պակասեցումները:

Ելնելով վերոհիշյալից եւ հաշվի առնելով ՓՄՁ-ների եւ ընդհանրապես տնտեսության զարգացման համար շատ անհրաժեշտ շրջանառու միջոցները տնտեսությունում թողնելու կարելիությունը, ինչպես նաեւ նպատակ ունենալով վերականգնել հարկատուների իրենց պատկանող սեփական միջոցները տնօրինելու իրավունքը ներկայացնում ենք սույն օրենսդրական նախաձեռնությունները: